

**ԲԱԽՏՆ ՈՒ ՉԱՐԸ / Հայ ժողովրդական հեքիաթներ, Հատոր VIII / Գուգարք (Լոռի), Լոռու
բարբառ (խոսվածք)**

Մի թագավեր մի խելոք ջահել տղի վեր ա ունում պահում, վեր իրան չիբուխը լցնի, կրակ բերի կպցնի: Էս տղեն էնքան լսող ու խելոք ա ըլմ, վեր թագավերը իրան հարագատ տղի պես սիրում ա:

Մի օր սա գլուխը դրել ա էս տղի ծնգանը ու քնել, հենց էդ հատաղին Բախտն ու Չարը գալիս են ըտի ու տղի աչքին ըրևում են: Սհանք սըկսում են իրար հետ վիճիլը:

Բախտը ասում ա.— Ես պտք ա սրան բախտ տամ:

Չարը ասում ա.— Չէ, էս պետք ա դրան թագավեր դարձնեմ:

Բախտը նեղանում ա, թողում ա, վեր գնա, տղեն աղլուխը գցում ա, վեր դրան բռնի, համա Բախտը փախչում ա ու աղլուխը ընգնում ա թաքավերի շլինքը, թագավերը ձեռաց զարթնում ա, տենում ա աղլուխը իրան շլինքին, տղեն էլ էրկու տտիցը բռնած սառած մնացել ա:

Ասում ա.— Հը՛, ի՞նչ էս անում, դու ուզիր ինձ քնած տեղը խեղդես, վեր իմ տեղը դու թագավեր դառնա՞ս:

Ձեռաց կանչմ ա ջանլաթներին տալի, ասում ա.— Տարե՛ք սրա գլուխը կտրեցեք:

Էս ջանլաթին էդ տղին տանում են մի ձորի միջի բրախում, ասում են.— Մենք քու հոր հացը շատ ենք կերել, վրե՛նց քու ըրնի տակը ընգնենք, գնա քու արևի ձենը ածա:

Մի նապաստակ են սըպանում, սըրա շորերը ըրնոտ են անում ու տանում թագավերին շհանց տալի: Տղեն գլուխը առնում գնում ա, ըստիան, ընդիան հաց ուզում, մի օր կուշտ, մի օր սոված, մի օր ըստի, մի օր ընդի գլուխ ա պահում:

Մի օր էլ մի դուռն ա թակում, սրան մի կտոր հաց են տալի, սա հացը ձեռին դհանց դռնովն անց կենալիս, դրանց բնատենը՝ սնին փթաթված ա ըլմ, օձ ա դառնում կորչում:

Տանտերը հենց գիդի, թե էս տղեն ա գողացել, հասնում են եղնեն, տենում են ձեռին զադ չկա, թող են անում գալի:

Ըստիան սա գնում ա մի գեղ, մի հարուստի տան չորան ա դառնում: Պայման են անում, ասում ա.— Ինչքան էգ ծնի՛ ինձ, վեռց ծնի՛ քեզ:

Էդ խեղճ տղի բախտիցը չիմ վեռց են ծնում: Էքսի տարին էլ տղեն ասում ա.— Լավ, էս տարի էլ ինչքան վեռց ծնի՛ ինձ, էգը՛ քեզ:

Էդ տարին էլ չիմ էգ են ծնվում, ու սհենց էլ էս խեղճ տղեն էրկու տարի դրա մհար չոբանութին ա անում ձրի, մի զադ էլ ա ըստանում չի, սա թողում ա գնում:

Հարուստը ասում ա.— Տղա, արի վացցուն վեշխար տամ, տար ապրի:

Սա վեր չի ունում, ասում ա.— Պետքը չի:

Գնում ա մի տեղ, տենում ա մի մենձ ջաղաց:

Ջաղացի տերը ասում ա.— Տղա, վեց քար ունեն, արի բնցրու, վեց քարիցը վերը ուզում էս քեզ, մհատ վե կալ հինգը ինձ:

Սա ջոկում ա, լավ քարը վեր ունում ու ջգացը աշխատացնում, էքսի օրը տենում ա իրան քարը աշխատում չի: Տհենց էլ խափան մնում ա, դրա մհար աշխատում ա:

Մի օր էլ սա ջղացի դռանը նստած մտածում ա, մըհել տենում ա հրես Բախտն ու Չարը էկան սրա աչկին ըրևացին:

¹ Շղթան-Օ. Բ.:

Բախտը Չարին ասում ա.— Դու էս մարդին ջղացական շինեցիր, սա էս թողումն ու կեղտումը կմահանա: Ես թող չեմ անիլ, կտիրանամ դրան ու թագավեր կդարձնեմ:

Տղեն փորձում ա, ասում ա.— Տենամ դուզ կլի, թախտն էկավ թե չէ:

Տանում ա էդ խափան քարի վրա ցորեն ա ածում, տենում ա քարը աշխատում ա:

Գնում ա խազեհինն ասում ա.— Արի քու ջաղացին տեր կաղնի, ես գնում եմ:

Տղեն թողնում ա գալի ընդի, որդի չոբան ա ըլիլ:

Խազեհինը ասում ա.— Այ տղա, բա էրկու տարի վեչխարս պիեցիր, խի՞ չի մի վացցուն վեչխար էլ ա տանիր:

Ասում ա.— Տարել ի մնալ չտեր:

Ասում ա.— Խի՞ :

Ասում ա.— Նրա միար վեր բախտ չի ունի:

Ըտիան գալիս ա էն բնատենի տիրոնջ տուն:

Էն բնատենը գալիս ա իրան տեղը, տերը ասում ա.— Այ տղա, ինչ դու գնացել իր, մեր բնատենը կորել էր, հենց դու եկար, նա էլ եկավ, էս ի՞նչ բան ա:

Տղեն ասում ա.— Էն վեր ես եկա ձեր տուն, նա օձ դառավ, երգինք բցրացավ:

Ասում ա.— Բա խի՞ չի էն վախտը ասիր:

Ասում ա.— Էն վախտը բախտ չունի, ասել էի, հավատալ չիր:

Ըստիան գալիս ա իրան թագավերի քաղաքը, տենում ա մի չութ վարող, ասում ա.— Հայրիկ, ինձ վի կալ չութ վարող:

Ասում ա.— Ա՛ տղա ջան, արի դու վարի, ես գնամ եզնանց միար ալափ ճարեմ:

Էդ տղեն մի քիչ վարում ա, մեկ տենում ա քարեր կա թափած, քարերը դեն ա ածում, վեր ըտի էլ վարի, մի մեծ քար ա բցրցնում, տենում ա հրես մի գուգուս վեսկի էդ քարի տակին:

Սա էդ վեսկին բերում ա հերացվի տուն, ասում ա.— Մի լուծ եզն էլ առ:

Էդ մարդը մի լուծ եզն էլ ա առնում, շատ բան էլ:

Դեհանք էնքան հարստանում են, որ էլ ասիլու չի:

Էդ օրերին մի թագավեր էդ թաղավերիցը ուժեղ հրաման ա դրգում, ասում ա.— Կամ օղըմը տներ կշինես, կամ քեզ վրա կռիվ եմ գալի:

Էս թագավերը իրան երգրի իմաստուններին կանչում ա, ասում ա.— Բա ի՞նչ անենք, կարա՞նք նրանց հրամանը կատարենք:

Դրանք շատ են մտածում, բան չի դուս գալի:

Թագավերը ասում ա.— Հեյ գիտի Չիբուխչի, վե՞րդի ես. դուս արի, մեզ էս նեղ տեղիցը ազատի:

Մեկ մտածում ա, մտածում, կանչում ա էն ջանլաթներին, ասում ա.— Դուզը ասացեք,

Չիբուխչուն սպանել եք, թե՛ չէ:

Ասում են.— Մենք նրա հոր հացը շատ ենք կերել, վենց մեր ձեռը վրա կգեր նրան սպանենք:

Տարանք քոլումը բաց թողինք:

Թագավերը իմաստուններին կանչում ա, ասում ա.— Չիբուխչին սաղ ա, վե՞նց անենք վեր նրան գտնենք:

Իմաստուններից մինը ասում ա.— Տունը մի վեչխար տու, ով մի ամիս կպահի, ինչ քաշով կտանի, էն քաշով էլ էդ բերի, իմացի, վեր Չիբուխչին նրա տանն ա:

Թագավերը տունը մի վեչխար ա տալի, ասում ա.— Ով կտանի կըպահի, իրա քաշովը էդ կբերի, իրա քաշովը մին վեսկի կտամ:

Տունը մի վեչխար են տանում, Չիբուխչին հերացվին ասում ա.— Գնա մի վեչխար էլ դու բի պիենք:

Էս մարդը գալիս ա մի վեչխար էլ ինքն ա բերըմ, օրեկան չաղացնըմ ա ու գելը բերըմ դաքին կապըմ, էդ քշերը մըչն լիսը վեչխարը կողքին մնըմ ա: Ռավեդը քաշըմ ա տենըմ լղարել ա, էլի բերած օրվա քաշն ա: Սա տիե չաղացնըմ լղարացնըմ ա. մինչն ամիսը թմամի:

Հորը ասըմ ա.— Դե տար տու թագավերին, ըլեդ քու բերած քաշն ա:

Էդ մարդը բերըմ ա տալիս ա թագավերին:

Թագավերը ասըմ ա.— Էս վե՞նց արի:

Ասըմ ա.— Ինձ մի ջահել տղա ունեմ, նա արավ:

Ասըմ ա.— Հլա էն տղին բի ըստի:

Էդ մարդը գալիս ա էս տղին տանըմ ա ըտի: Թագավերը տենըմ ա իրան Չիբուխչին ու ասըմ ա.— Վա յ, Չիբուխչի ջան, էս վե՞րդի գնացիր, էն խի՞ ուզիր ինձ խեղդիլ, որ ես էլ ուզի քեզ սպանիլ տամ: Տղեն ասըմ ա.— Չարն ու Բախտը եկել ին կուշտս յաղլուխը գցեցի, ուզեցի

Բախտին բռնեմ, ընգավ շլինքդ:

Ասըմ ա.— Բա խի՞ չի էն վախտը ասիր:

Ասըմ ա.— Հվատիլ չդիր, նրա հմար վեր բախտս գնացել էր, չարն էր մնացել:

Թագավերը ասըմ ա.— Չիբուխչի ջան, փլան թագավերը ինձ ասըմ ա օղըմ տներ շինի, թե չե՝ քեզ վրա կռիվ եմ գալի:

Չիբուխչին ասըմ ա.— Գնա իրեք տարով ժամանակ վե կալ:

Էս թագավերը գնըմ ա իրեք տարով ժամանակ ա վեր ունըմ, գալիս ա Չիբուխչուն ասըմ ա.— Վեր եմ կալել:

Չիբուխչին երկու պուճուր բեխի սվրցնըմ ա, ասըմ ա:— Ասացեք քա՛ր, ցե՛խ, քա՛ր, ցե՛խ:

Էրկու հատ էլ արծվի ճուտ ա բռնըմ, սվորցնըմ ա, օղըմը պտիտ են գալի: Մի կարգինգա ա գործըմ, էդ արծիվների վրա սրզըցնըմ, երեխանց էլ նստացնըմ միջին ու բրցրացնըմ օղը ու ասըմ. «Քա՛ր, ցե՛խ, քա՛ր, ցե՛խ»:

Էդա իրեք տարին վեր թմամոււմ ա, էն թագավերի մարդիկը գալիս են, ասըմ.— Հը, պատրաստ ա :

Ասըմ են.— Հա:

Արծիվներին դուրս ա բերում, կարգինգեն դնըմ վրերնուն, բեխանցն էլ միջին ու օղ ա բցրցնըմ, սրանք օղըմը պտտվըմ են, ըրեխեքն էլ միջից կանչըմ են. «Քա՛ր, ցե՛խ, քա՛ր, ցե՛խ»:

Չիբուխչին ասըմ ա.— Դե քար ու ցեխ տվեք, ուստենին քար ու ցեխ են ուզմ, վեր տներ շինեն:

Էն թագավերի մարդիկ հաղթվըմ են, թող են անըմ, գնըմ, էս թագավերը նորից սրան տանըմ ա պալատ, ավելի մեծ պաշտոնի ա դնըմ, դառնըմ ա մինիստր:

Բախտը ասըմ ա.— Տեհա՛ր վենց արի, վեր դրան շինեցի մինիստր: